ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Խոր գլուխ տալով) Կատարող եմ բոլոր հրամանացդ, էլ ոչինչ չե՞ս օրինում, գրի՛չ երկնային:

ՆԱԶԱՐ.– Դե, էլ հերիք է, եա՛լլա: (Քացի է տալիս:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Գլուխ է տալիս ու հեռանամ:)

ՆԱԶԱՐ.– Բաղնիս: Իշի թոռ, պապս բաղնիսում մեռաւ, ա՜:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Մտնում է երկու սպասաւորի հետ, որոնցից մինը բերում է անուշահոտ ջրեր, իսկ միւսը թեւին ցցած երեսսրբիչներ, ղենջակ եւ սփածանելի: Նրանք Սենեկապետի ցոյց տուած ձեւերով նախ թաց երեսսրբիչով սրբում են Նազարի երեսը, ապա եւ օծելով նրան՝ լաթերը փաթաթում են մէջքին, Սենեկապետի ցուցմունքով:)

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ցոյց է տալիս) Օծեցէք նախ քիթը արեգակնային գեղեցկութեան: Այդպէս: Սփածանալի հրամցրէք: (Սպասաւորները սրբում են Նազարի քիթը:) Այդպէս: Հիմա եօթն կաթիլ հնդկական վարդեջուր կաթեցրէք դնչին շնորհաց աղբիւրի: Այդպէս: Ղենջակ: (Սրբում են դունչը:) Երեք կաթիլ արաբական ստաշխենի սքանչելեաց ծոծրակին: Այդպէս: Ղենջակ: Ամենայն զգուշութեամբ եւ երկիւղածութեամբ երեք անգամ կաթիլ Շիրազի վարդեջուր ամպաշուք հոնքերին եւ ընչացքներին: Այդպէս: Ղենջա՛կ,

ՆԱԶԱՐ.– (Ծամածռելով դէմքը եւ. աչքերը ճպճպացնելով) Կացէ՛ք, կացէ՛ք, հայվաննե՛ր, աչքերս լցուեցին:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Դադա՛ր պահ մի:

ՆԱԶԱՐ.– (Հոտոտելով օդի մէջ) Հը՛մ… Լաւ հոտ ունի անիծածը: Ապա մի էն թասի մէջ մի քիչ ածէք բերէք: (Բերում են: Խմելով) Լաւն է: Բո՛… զուր տեղը ինչի՞ էք փչացնում: Էլ չփչացնէք: Հարկաւոր չէ: Ամեն օր բերէք, ես կխմեմ: Հիմի՝ եալլա՜:

ՄԱՆԿԼԱՎԻԿՆԵՐ.– (Հաւաքում են շշերն ու սրբիչները եւ դնում: Սենեկապետը հետեւում է նրանց:)

ՆԱԶԱՐ.– (Թիկն է տալիս ու քիշմիշ ուտելով, սկսում է երգել: Նրան ձայնակցում է Սաքոն) Ամա՛ն էՀ, այ ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, էյ ամա՛ն, ամա՛ն:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս մտնելով) Ունկն ողորմածութեան: Մի գեղջուկ կին է եկել եւ հրամանոցդ տեսութիւնն է խնդրում:

ՆԱԶԱՐ.– Հա, յետոյ՞: Իշի՛ թոռ,

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Մի գեղջուկ կին է եկել, կհաճի՞ս արժանացանել իրեն արեգնատեսիլ երեսհարքիդ:

ՆԱԶԱՐ.– Չեմ հասկանում՝ ինչ ես ասում, գնա ասա՝ (երգելով) հա՜…

ՍԱՔՈ.– (Երգում է:) «Գնա ասա հա՜»…